



Ա. ՀԱՏԻՑՅԱՆ

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԿԵՍԱՐԱՑԻ (329—379)

ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՅ, ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դ դարի երկրորդ հիմնամյակում ընդհանուրական եկեղեցու պատմության մեջ իրենց եկեղեցական գործունեությամբ և մատենագրական նարուսու ու բազմաժանր վաստակով բաշածանոթ են երեք մեծ կապադոկիացիներ՝ որպես աստվածարան, մատենագիր և սուրբ. Բարսեղ Կեսարացին (329—379), նրա բարեկամ և գործակից Գրիգոր Նազիազանցին (330—390) և Բարսեղի եղբայր Գրիգոր Նյուացին (335—394):

Ընդհանրական եկեղեցու այս եռամեծ վարդապետների ուսանելի կանքը ու սուրբ գրական գործունեությունը սերտորեն կապվում են Փոքր Ասիայում արիոսականության դեմ ողղափառ եկեղեցու մղած աստվածաբանական հականառությունների, եկեղեցու ամրապնդման և ներքին խաղաղության ապահովման աշխատանքների հետ, աշխատանքներ, որոնք հատակորեն ցույց են տալիս, թե ինչպիսի վտանգ էր ներկայացնում արիոսականությունը Փոքր Ասիայում եկեղեցիների համար, և ինչքան էր տարածվել այդ մոլորությունն հոգմանական արքունիքի և տեղական իշխանությունների ակնհայտ պաշտպանության ներքո. «Այս սրանչելի

եռյակի մեջ Աթանասի աստվածաբանական գործը գտավ իր շարունակությունը և հասավ իր գագաթնակետին: Երբ մահացան Կապադովլիայի այս երեք մեծ Հայրապետները, արիոսականության չախչախտմը և Նիկիական հավատքի վտանգոր հալթանակը ապահովված էր»¹: «Ս. Բարսեղի, ս. Գրիգոր Նազիազանցու և ս. Գրիգոր Նյուացու բերած նպաստը ողղափառ աստվածաբանության հաղթանակին, «հելլենականության և բրիտանության» հարցի լուծմանը, եկեղեցու ծոցում խաղաղության վերահստատմանը, վանականության տարածման և կազմակերպման գործում եղել է շատ մեծ, այն աստիճան, որ այդ նպաստը տեսական ազդեցությունն է գործել ընդհանրական եկեղեցու ողջ կանքի վրա»²:

Այս սրանչելի եռյակը «թեև իրար հնա կապված են մտքի և հոգու ընդհանուր գծերով, ինչպես նաև սերտ բարեկամության անքակունի կապերով, աշխատմենայնիվ նրանցից լորաքանչյուրը ներկայացնում է

¹ Արիոսականության ... մասին տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1977, № Բ, էջ 26—27:

² Johannes Quasten, Patrology, vol. III, էջ 203

անհատականության տարբեր տիպեր: Այսպէս, Բարսեղ Կեսարացին համարվում է որպես գործնական ուղղության տեր մարդ, «զորեղ» և դրական հոգի»: Գրիգոր Նազիացանցին՝ որպես հոկտորության վարպետ, իսկ Գրիգոր Նյուսացին՝ որպես մտածող»³:

Կապադովկիայի այս երեք մեծ Հայրապետներից լորաքանչյորի աստվածաբանական մտածողությունն ու գործունեությունը նույնպես ներկայացնում են «ինքնուրույն առանձնահատկություններ», ինչպես ընդհանուր բնափորության, այնպես էլ մաճրամասնությունների մեջ. ասկայն դրանք իսկապես նոյն աստվածաբանության պյանդություններն են: Այդ աստվածաբանությունը յոր հիմնական սկզբունքներով և էական տարրերով խիստ բարդ ձևով է ներկայանում: Նախ և առաջ նրա վրա ազդեցություն է ունեցել Որոգինեար... Բարսեղ Մեծը և Գրիգոր Սատվածաբանը, նոյն ժամանակ Որոգինեաի երկերի ամենաընդուր հատվածների ժողովածուն՝ «Ֆիլոկայիա» կազմեցին: Որոգինեաի մեկնաբանական աշխատությունների ուսումնասիրությունը նըրանց համար նախապատրաստությունն էր արիուականության դեմ պայքարելու համար...: Կապադովկիացի Հայրապետների աստվածաբանության «ընդհանուր բնափորությունը և ոգին և էական եզրակացությունները» իրենց հիմք ունեն Նիկիական դավանականքը: Այստեղից բնականաբար ծագում է նրանց կախումը և Աթանասի աստվածանությունից: Նրանք և Աթանասի աշակերտներն էին և դրանով ամրացրին կապը նոր Ակեքսանդրիայի աստվածաբանության հետ»⁴:

Ս. Բարսեղի, և. Գրիգոր Նազիազանցու և ս. Գրիգոր Նյուսացու աստվածաբանական վարդապետությունը շատ մեծ կարևորություն և նշանակություն է ունեցել հետագա դարերի աստվածաբանական-քրիստոնաբանական մորթի զարգացման համար, ընդհանուր եկեղեցու պատմության մեջ:

Կապադովկիայի հայրերի «աստվածաբանական երկասիրությունների մեջ և ս. Երրորդության հարցը յոր վեշտնական որոշումը ստացավ և նրանց հաստատած եկեղեցական հասկացողությունը, նրանց ստեղծած բանաձևները դարձան թանկագին սեփական ուղղակիության մեջ: Աստվածաբանական երկասիրությունների մեջ ս. Երրորդության հարցը յոր վեշտնական որոշումը ստացավ և նրանց հաստատած եկեղեցական հասկացողությունը, նրանց ստեղծած բանաձևները դարձան թանկագին սեփական ուղղակիության մեջ:

Կապադովկիայի հայրերի «աստվածաբանական երկասիրությունների մեջ ս. Երրորդության հարցը յոր վեշտնական որոշումը ստացավ և նրանց հաստատած եկեղեցական հասկացողությունը, նրանց ստեղծած բանաձևները դարձան թանկագին սեփական ուղղակիության մեջ: Վաղարշապատ, 1910, էջ 36—37:

³ Նույնը, էջ 203—204: Տե՛ս նաև պրոֆ. Ն. Սագարյա, Հույն-արևելքի մին եկեղեցական աստվածաբանական գիտությունը, յոր ծաղկման շրջանում (Դ—Ե դր.), Վաղարշապատ, 1910, էջ 36—37:

⁴ Պրոֆ. Ն. Սագարյա, նոյնը, էջ 37—38: Ս. Աթանասի աստվածաբանության մասին տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1977, № Բ, էջ 26—27:

դավանության: Բայց Կապադովկիայի հայրերը միայն բացատրեցին և բացեցին եկեղեցու վարդապետությունը, ինչպես որ այդ արտահայտված էր Նիկիական ժողովում, չփոխելով նրա էությունը... Ս. Գրիգոր Սատվածաբանը Նիկիայի հավատի հանգանակը ներկայացրեց յոր ամբողջ պարզությունը և արտահայտությունը տվեց, իսկապէս ամենաբարձր գաղտնիքները հանրամատչելի դարձելով: Բարսեղ Մեծը այդ հավատը կյանքի մեջ ներմուծեց, իսկ Գրիգոր Նյուսացին նրան զիտական-փիլիսոփայական հաստատությունն տվեց»⁵:

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Բարսեղ Կեսարացին կոչվել է Մեծն Բարսեղ և երկրորդ Աթանաս: Կեսարացին «ս. Աթանասից հետո ամենազորեղ ջատագովն է հանդիսացել Նիկիական դավանության և ս. Անտոնից հետո գլխավոր հիմնադիրն ու կանոնագիրը՝ արևելյան վանականությանը»⁶:

Բարսեղ Կեսարացին ծնվել է 329 թվականին Կապադովկիա գավառի Կեսարիա քաղաքում, քրիստոնեական բարեպաշտությամբ, կենցաղավարությամբ և առաքենությամբ հոչակված մեծահարուստ և ազնվական ընտանիքում: «Ը հօրէ պոնդացի, ի մօրէ կապադովկացի, ոչ յանշանից ոսանց, այլ ի մեծաց և յերևելեաց և ճշմարտութեան հասատովն պայծառ»⁷:

«Սերեցավ սուրբերու ընտանիքն մը: Սուրբեր էին հայրն ու մայրը, մայրենի պապը ու մամը, եղբայրը՝ ս. Գրիգոր Նյուսացին, քուրը՝ սուրբ Սաքրինան»⁸: Բարսեղ Կեսարացու «ընտանիքը ծագմամբ Հայաստան, երկրին ամենեն ծանոթ ընտանիքներեն մին էր, միևնուն ատեն եկեղեցու մեջ ամենեն հոչակալուներեն: Իր հայրը, իր մայրը, իր մորենական մեծ հայրը, սրբոց դասը անցած են»⁹: «Կեսարացու հայրական պապը և նրա կինը շերմեռանդ քրիստոնյաներ են եղել: Քրիստոնեության դեմ տարփած հալածանքներից ազատվելու համար նրանք յոթ տարի անօթևան թափառել են

⁵ Պրոֆ. Ն. Սագարյա, նոյնը, էջ 40:

⁶ «Անիք հաւատոյ», ս. Էջմիածին, 1914, նախարար Կապադովկիան եպու. (Տե՛ս-Մկրտչյանի), էջ XLV:

⁷ Կիմ Մ. Մուրայյան, Բարսեղ Կեսարացին և Ծրա «Վեցօրեւան» հայ մատևնագրության մեջ, Երևան, 1976, էջ 270: Նոյնի առաջին գլուխը՝ ունի «Բարսեղ Կեսարացու կյանքը» վերնագիրը, էջ 27—54:

⁸ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Սուրբը և տոնը, Երևանիւմ, 1939, էջ 68:

⁹ Արշակ Ալպոյանը, Պատմություն հայ Կեսարիու, Ս. Խաչոր, Գամիրե, 1987, էջ 258:

Պոնտոսի անտառներում, զրկվելով իրենց կալվածքներից և զանազան հյութական միջոցներից»¹⁰:

Ս. Բարսեղ Կեսարացու կյանքի և գործունեության ու նրա վարքագրության մասին մեզ հասել են մի շարք ձեռագիր պատմական, մատենագրական սկզբանքը լույս բարեկայի և գրած «Վարք»-ը, թղթերը, նրա մասնակի առթիվ նրա բարեկայի և Գրիգոր Նազիազանցու խոսած «Նամքանական»-ը և նույնի թղթերն ու նրա՝ իր իսկ ձեռքով գրած «Վարք»-ը: Հայ բանափրության մեջ ևս կան տպագիր բազում արժեքավոր վարքագրություններ և ուսումնասիրություններ Բարսեղ Կեսարացու կյանքի, գործունեության և մատենագրական պատմակի մասին¹¹:

Ի դեպ, պատեղ ամենայն կարևորության պես է արձանագրել, որ Կ. Մ. Մուրադյանի վերոհիշյալ աշխատությունը խընթացիտ, լորչ ու արժեքավոր ուսումնասիրությունն է և գիտական ներդրում «Բարսեղագիտության» մեջ ոչ միայն և. Բարսեղ Կեսարացու «մատենագրության հայերեն թարգմանության ուղղությամբ», այլ նաև «հայ բանափրության մեջ տասնամյակների ընթացքում Բարսեղ Կեսարացու շորոշ տեղենված գրականության» և նրա կյանքի ու գործունեության մասին, գործ, «որևէ արդյունք է եղկար տարիների տքնաչափ աշխատանքի»¹²:

Բարսեղ Կեսարացին իր հայկական կրթությունն ստուգում է իր նորից՝ Բարսեղից, որը ոչ պակաս հոչակիւած հուեսոր էր Պոնտոսի Նեռ-Կեսարիա քաղաքում և իր ողբուն վարժեցնում էր «ոչ նապաստակ խիելու, ոչ այծ խրտեցնելու և ոչ էլ եղնիկ որսպուտ,... այլ ուսուցանում էր գիտության սկզբանական ոլորտները և աստվածակրթությունն էր սերմանում... ամենասատչեն դասերով իսկ մղում հետազա կատարելության», ինչպես վկասում է Գրիգոր Նազիազանցին: Բարսեղի հայրը ողբին էր սուրբ Մաքրինա երեցի: Վերջինս աշակերտել էր Գրիգոր Նազիազանցու նորը՝ Գրիգոր Սրբնչեագործ եպիսկոպոսին, և տիպար ու կրթված համատակլոր կին էր:

Հայ վարքագիրների վկայության Բարսեղ

¹⁰ Կ. Մ. Մուրադյան, նոյնը, էջ 28:

¹¹Տե՛ս Հ. Ս. Անապան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺՀ. դդ., հասոր Բ, Երևան, 1976, էջ 1343—1346, 1399—1405: Կ. Մ. Մուրադյան, նոյնը, «Ներածություն», էջ 5—26: Նաև Բարսեղ Կեսարացու կյանքը, էջ 26—54:

¹² Վազգեն Հակոբյան, Պատմա-բանափրական հանիսի, № 1, Երևան, 1977, էջ 251: (Գրախոսություն Կ. Մ. Մուրադյանի գրի մասին):

Կեսարացու դաստիարակության և ոսումնատության գործում վճռական դեր է կատարել նաև նրա «սուս Մաքրինան», «որը շատ հակամատ էր ճգնաւորական կյանք վարեկու և յոր այս աշխարհաբացքին վարձեցրեց Բարսեղին դեռևս վերջնիս մասունքասկում»¹³:

Կեսարացու մայրը՝ Էմիլիան, աղջիկը նոյնպես մի մարտիրոսի, թղթի կապադովկիացի էր: Նրա ծնողներն էլ ծանր չարչարակներ և զրկանքներ էին կրել ու նաև առաջակիցի հանուն իրենց քրիստոնեական հավատի: Էմիլիան ծնունդ էր տվել 10 երեխաների, որոնցից 4-ը տղա, 6-ը՝ աղջիկ: Տղաներից երեքը հետագայում դարձան եկեղեցու հշանավոր հայրեր և եպիսկոպոսներ, և. Բարսեղը, և Գրիգոր Նյուսացին և Աւրաստիացի և. Պետրոս եպիսկոպոսը, իսկ նրանց նամբրիանիության արտակարգ տաղանդով օժտված մեկը, բայց մահացել է վաղ հասակում: Բարսեղի մեծ քույրը ծանոթ է եղել իր բարեկապատությամբ, ճգնավորական խիստ կենցաղով և կոչվել է Կուլս Մաքրինա Կրտսեր:

Բարսեղը ծնունդով եղել է թույ և վաստովոց: Նրա մերձ ի մաս հիվանդանալոց նետու հայրը ընտանիքով թղթնում է Կապադովկիան և հաստափում Պոնտոսում: Արտեղ Բարսեղի կրթությամբ զբաղվում է նրա հայրը, իսկ նրա քրիստոնեական դաստիարակությամբ՝ նրա քույրը՝ Մաքրինան:

Բարսեղ Կեսարացու օրով Կապադովկիացում հշանավոր քաղաք էր Կեսարիան, որը հայտնի էր որպես քրիստոնեության և «լուսավորության կենտրոն» և կարող էր հապատական գիտության կենտրոն»¹⁴: Այնուհետև ուսումնա մեջ կատարելագործվելու համար նա անցնում է Կ. Պոլիս, «ի թագառական քաղաքն Կոստանդնոպոլիս», աշակերտելու հշանավոր հուեսոր Լիքիանոսին (314—393), երբ ինըն արդեն այդ թվականներին (344—351) «ճարտասան էր ճարտասանների մեջ՝ մինչ նրանց ունկնդրելը, փիլիսոփա էր փիլիսոփաների մեջ՝ մինչ փիլիսո-

¹³ Երվանդ Վրդ. Տեր-Միհանան, Ընդհանուր և կենսագալան պատմություն, հասոր Ա, և. Էջմիածին, 1908, էջ 270:

¹⁴ Կ. Մ. Մուրադյան, նոյնը, էջ 31:

¹⁵ Թորգոն արքեա. Գուշակյան, նոյնը, էջ 68:

փայության դաստիացքն անցնելը», ինչպես վկայում է Բարսեղի մասին և Գրիգոր Նազիազանցին:

Իր ուսումնառության տարիներին իսկ Բարսեղը «իր բարք ու վարքին ծանրությամբ կմրցեր նոյնիկ քահանաներուն հետ»¹⁶:

Բարսեղ Կեսարացին այնուինու իր ուսումնառության մեջ խորանալու և Ել ավելի հմտանալու համար «ցանկայի հմուտ լինել փիլիսոփայական արուեստցն», երբ արդեն «ԺԵ (15) ամեայ եղեալ», 352 թվականին գնում է Աթենք: «Աստիկեի մայրաքաղաքը այն ատեն ամեն բան առաջ համալսարանական քաղաք մըն էր: Իր դրացներու հին փառքն էր որ օտարները իրեն բով կքաշեր: Դեպի անոր բեմերը կվագեին աշակերտները», «ի մայրն իմաստութեանց»: «Դ դարում անհնար էր պատկերացնել ավարտուն ուսումնառություն սուանց Աթենքի համալսարանի»¹⁷:

Աթենքում էր դարձյալ, որ Բարսեղ Կեսարացին հանգամանորեն ուսումնասիրում է քրիստոնեական վարդապետությունը և «Աթենքի համալսարանում ուսանելիս միան համարվորություն ունեցավ պատկերացներու քրիստոնեության բացահայտ առավելություններն ու առանձնահատկությունները, առանց որոնց անհնար կիմեր կողմնորոշվել այն պայքարում, որ այնուինու տարիներ շարունակ վարեց նա հօգուու քրիստոնեական տարածման և վերջնական հայթանակի»¹⁸:

Աթենքում Բարսեղ Կեսարացին 352—356 թվականներին, ի թիվս այլ ճշանավոր դասախոսների, «աշակերտեցավ հայազգի Պրոլետեստոսին՝ կամ Պարույր Հայկազնին, իրեն դասընկեր ունենալով կայսերազուն Հովհանոսը, որ ապագային Ուրացողը պիտի ըլլար»: Աթենքի մեջ ո. Բարսեղ հանդիպեցալ իր բարեկամին՝ Գրիգոր Նազիազանցին, որուն կյանքը և գործը իրենին անբաժան պիտի ըլլար»: Կեսարացու և Նազիազանցու «զուտուննակցութիւն և զսիրոյն կապ, որ առ միմեան, ի մանկութենէ» էր¹⁹:

¹⁶ «Էլոյ» շաբաթաթերթ, 1905, Կ. Պոլիս, հասոր Ա, էջ 708: Հոդվածաշարք P. Allard-ի, «Սուրբ Բարսեղ» ֆրանսերեն գրքից, ազատ թարգմանությամբ Տիրայր Վարդապետ Մարգարյան:

¹⁷ Նոյնը և Կ. Մ. Մուրադյան, էջ 85:

¹⁸ Նոյնը:

* «Տեսե՛ք,—ասում էր Բարսեղ Կեսարացին Հովհանոսի մասին,—ինչպիսի խարազան է պատրաստում իրեն կայսրությունը»:

¹⁹ Արշակ Ալպյանցյան, նոյնը, էջ 258:

Quasten, նոյնը, էջ 204: «Էլոյ» շաբաթաթերթ, նոյնը, էջ 780: Հովհիկ եպս. (Տեր-Մովսիսյան),

Աթենքում Կեսարացին ծանոթանում է արտաքին գիտություններին, ուսումնասիրում քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն և մանավանդ ճշգրիտ ու բնական գիտություններ՝ աստղագիտություն, երկրաչափություն, բժշկություն:

Աթենքի ուսումնառության տարիներին Բարսեղ Կեսարացին խորը հիասթափություններ է ապրում «Աթենքի մեջ չգտնելուն համար հաստատուն վայելքներ, զոր երազած էր, այլ անոնց մեջ գտած էր «խարեպատիր երջանկություն մը, երանության ստվեր մը»... Բարսեղ և Նազիազանցին խնջույքներու, տեսարաններու և աղմկանոյզ տուներու տեսարաններեն հեռանալով եկեղեցւու և դպրոցի ճամբանները միայն ճանչցան»²⁰: Աթենքում Բարսեղ Կեսարացին ստվորում է 352—356 թվականներին: Ապա իր ուսումն ավարտելուց հետո նա թողնում է Աթենքը «ոչ այնքան ուսումնառության ավարտի պատճառով, որքան միջավայրից հակադրված» (Կ. Մ. Մուրադյան) և վերադառնում իր ծննդավայրը, «ուր իրեններն իրեն կսպասեին անհամբեր, մինչ Նազիազանցին Բարսեղի խորհուրդին վրա Աթենքի մեջ իր բնակությունն երկարաձգեց»²¹:

Կեսարիայում Բարսեղը որպես բազմակողմանիրեն պատրաստված և հմուտ անձնավորություն, որպես «գիտությամբ ծանրաբեռնված նավ» (Գրիգոր Նազիազանցի), գրադպում է մի որոշ ժամանակ հոեստրական արվեստի դասավանդությամբ և փաստաբանությամբ:

Այդ տարիներին է, որ Բարսեղ Կեսարացին ապրում է հոգեկան տագնաապ և ապա՝ հոգեկոր վերածնունդ և իր ողջ կյանքը նվիրում՝ Աստուծուն եկեղեցու անմնացորդ ճառայության նվիրական գործին:

Աթենական ուսումնառության տարիների հեթանու բարքերն ու իմաստագործ կենցաղը խորապես ազդել էին Բարսեղ Կեսարացու հոգեկանին, նրա մերաշխարհի վրա. «Բազմաթիվ քրիստոնյաներու կողմեն Աթենք առաջին տեղը կգրավեր այն քաղաքներուն մեջ որ բնակիլը վտանգավոր էր հավատքի տեսակետուն: Բայց կուպաչառության տեսարանը Աթենքի մեջ, ավելի ամրացուց նաև Բարսեղի հավատքը: Անիկա կիրճվեր քրիստոնյա ըլլալուն համար»²²:

Բարսեղ Կեսարացին հետազայում նկարգրում է իր հոգեկոր վերածնունդը այս բա-

Անապատականներ և վանականություն, Վաղարշապատ, 1906, էջ 44:

²⁰ «Էլոյ» շաբաթաթերթ, էջ 780—781:

²¹ Նոյնը, էջ 781:

²² «Էլոյ» շաբաթաթերթ, էջ 780:

ոկրով. «Ըստ ծամանակ փեացրի ես հիմարությունների վրա և համարյա իմ ամբողջ երիտասարդությունը վատնեցի ավելորդ աշխատաքնների մեջ, մի իմաստության մեջ խորանակու և երան նվիրվելու համար, իմաստություն, որը հիմարություն է ըստ Աստուծու (Ա.Կորնը. Ա. 20): Համեմարձ ես զարթնեցի որպես թե մի խորոնի քնից: Ես ընթեռնեցի Ավելարամի ճշմարտության զարմանակի լույս և ճանաչեցի այս աշխարհի հշանեների իմաստության ոչ հոգությունը, իմաստություն, որը խափանվելու է (Ա.Կորնը. Բ. 6): Ես արցունիքի նեղեններ թափեցի իմ դժբախտ կանքի վրա և աղոթեցի մի առաջնորդության համար, որը կարողանար իմ մեջ ստեղծել բարեպաշտության սկզբունքները»²³:

Հոգևոր այս վերածննդից անմիջապես հետո Բարսեղի առաջին ու վերական քայլը է հանդիսանում 357 թվականին քրիստոնեական մերժություն ընդունելու Կեսարիակի Դիամետու եպիսկոպոսից, «Քրիստութիւն հեթանու գրականությունը մշակելու և նվիրվիլ ամբողջությամբ Աստուծոն»²⁴:

Այնուհետև Կեսարացին նվիրվում է վաճական-անապատական կանքի խոկումների և ուսումնասիրության. «Քրիստոնեական մերժությունն ընդունելուն պես նա իրեն նվիրեց ճգնապրական կանքի: Նրա այս հայցըքին ավելի ուժ էր տալիս այն հանգամանքը, որ նոր մահից հետո երա մայրն ու բույրն ևս բարեկամութիւնների հետ միասին սկսել էին անապատական կանք վարել»²⁵:

358 թվականին Բարսեղը այցելում է Եղիպտոսի, Պաղեստինի, Ասորիքի, Միջազգանքի մենաստանները՝ ուսումնասիրելու վաճական կանքը և անձամբ ճանորդակայտ անվանի վաճական-անապատականների հետ: Այս ճանապարհությունը և վաճական կանքի հետ մոտիկից երա ճանորդությունը խոր տպավորություն են յոդենում երա վրա: Կեսարացին հետագարում մեծ հիացումով և հափշտակությամբ էր խոսում իր այցելած մենաստանների և վաճականների մասին: «Են երկրութանությամբ ես հիշում վաճականների չափավորությունը ու տելիքի մեջ. աշխատանքի մեջ երանց սովորության վրա ես հիացել էի. սքանչացել էի աղոթքի մեջ երանց չերմեռանության և շանասիրության վրա. զարմացել էի թե երանք ինչպես հաղթում են քնին. չեն ընկնաւում ոչ մի մարմանական կարիքի առաջ. միշտ նոզու արիություն էին պահում

բաղցի, ծարավի, ցրտի և մեղրկության մեջ... Նրանք, նիրավի, ցուց էին տախու թե ի՞նչ է հշանակում ապրել որպես երկնարարացի, արհամարթելով աղցաւոր աշխարհը: Այս բոլորը իմ մեջ նիացնուելու էր ասացնուում: Այս մարդկանց կանքը օրինակ կանք էր և երանք իրենց մարմնի մեջ ապրում էին Հիսուսի մասը: Եմ աղոթքն այն էր, որ ես եւ երանց նմանման»²⁶:

Երբ այս ճանապարհությունից հետո, 360-ին, նա վերադառնում է Կեսարիա, Բարսեղն իր ողջ հարստությունը, որը ժառանգել էր իր նորից, բաժանում է աղքատներին և սահմանում «աւաստանիս և լեռնու» Պոնտու, երիս գլուխ ամին, Անհապատ, ոչ շատ հետո Նեռկեսարիա քաղաքից, ապրելու համար վաճական-միարականական կանքու, վաճերելի և վաճական հաստատությունների միջոցով ամրապնդելու եկեղեցին և պարարեկությունների դեմ: Այսուղի Կեսարացու շուրջ հավաքվում է վաճական-կրոնական նոյն կանքին նվիրված բարեպաշտ մարդկան մի հոծ բազմություն: Դրանց մեջ էր նաև Բարսեղի մազը: Նա հաջորդ տարիներին Պոնտոսի մենաստաններ ու Խրազդանոցներ է հաստառում և երանց դեկապարության և գործունեության համար կազմում վաճական կանոնադրություններ՝ արդարութեան համարվելով մեծ օրենսդիր և կանոնագիր օրբողոք վաճականության:

Պոնտոսի այս առանձնության մեջ Բարսեղ Կեսարացին 358 թվականին ընկրուենում էր այցելությունը իր երեկոնի դասընկեր և բարեկամ Գրիգոր Նազիազանցու, որը եկեղեց էր «բածական իր բարեկամի գրկանըները» և որի հետ կազմում է Որոգինեսի աշխատությունների անթողոգիան՝ «Ֆիլոկայիս» անունով և թվով 55 վաճական կանոնադրություններ:

Բարսեղի և Նազիազանցու կանքը վեճանիսուն այս առանձնության մեջ շրջապատված էր սակայն ծանր դմկարություններով. «Նրանց խճիթը առանց տանիքի էր և սանց դրան. վատարանը՝ սանց կրակի, պատերը խորշակից ամերան էին չորացել և ճարճարել, որ երա մեջ բնակուելու կաթիքի և անձրևի ժամանակ չեն կարողանում ցեխոստ կաթիւներից պատրապարվել: Նրանք պատեղ կենում էին տանտարությունների դատավարությանը և վաճականական չեն կարոքագիրները: Բայց երանք նոզով կայտառ էին և ուժեղ: Բարսեղ Կեսարացին վաճական շարքաշ այդ կանքը որախու-

²³ Quasten, նոյնը, էջ 205:

²⁴ Արշակ Ալպոյանցան, նոյնը, էջ 259:

²⁵ Երվանդ Վոլոտ Տեր-Միջամայն, նոյնը, էջ 270:

²⁶ Հուսիկ Եպս. (Տեր-Մովսիսյան), նոյնը, էջ 45: Նաև Quasten, նոյնը, էջ 205:

թյամբ և հպարտությամբ անվանում է «Մամրեի կաղնի, դեաի երկինք բարձրացող սահմուղ, Մաքանայիմի կայարան, Եղիա մարգարեի Կարմեղոս, Հովհաննես Մկրտչի անապատ և Ջիթենյաց լեռ»:

358—364 թվականները Բարսեղ Կեսարացին Պոնտոսի վանական առանձնության մեջ է անցկացնում իր կյանքը, ստեղծագործական, հոգեշեն մեծ իրագործումներով։ Նրա գիտնականության և հոգևորական օրինակելի կյանքի «պայծառ իմաստութեան և հիեշտակական» համբավը հոչակվում էր ողջ Կապադովկիայում։

Այդ թվականներին Կապադովկիայի Եվստիփոս միտրոպոլիտը աշխատում է օգտագործել «սարկավագապետ» Կեսարացու մեծ տաղանդը իր թեմում, մանավանդ արիոսականների դեմ պայքարելու համար, և հրան հրավիրում Կեսարիա, իր մոտ, որպես «ամենայն ինչ՝ յամենայն»։ Որպես ողդափառության ամենաչերմ պաշտպան, որպես քարի և ազնիվ խորհրդական, խելացի օգնական և հմուտ կազմակերպիչ, ս. Գրոց քաջածանոթ մենակից, իր ծերության նեղուկ և գալագան, ավելի վստահելի և արժանավոր անձ, քանի իր ողջ հոգևորականությունը, ինչպես վկայում է այս մասին Նազիացանցի²⁷։

364 թվականին Բարսեղ Կեսարացին Եվստիփոս միտրոպոլիտից քահանա է ձեռնադրվում։ Ավելի առաջ սարկավագ էր ձեռնադրվել Սեմիոտում Մելիսոս եպիսկոպուսից։

Կեսարացին իր քահանայական ձեռնադրությունից հետո էլ 3—4 տարի դարձալ առանձնանում է Պոնտոս՝ իր հիմնած մենաստանների մեջ, և նվիրվում իր սիրած վանական կյանքի էլ ավելի կազմակերպությանը։

Բարսեղ Կեսարացին որպես օրթոդոքս եկեղեցու վանականության հիմնադիր և կանոնագիր համոզված էր, որ վանականները «չակոր է անպայման միավության մեջ ապրեն և ճանապարհական կյանքի անձնության և անձնաշարքար լինելու չափազանցություններին վերջ դնելու համար կանոններ են պետք։ Նա շատ էլ չէր քաջալերում միանձնական ճանավորությունը։ Նա մտածում էր, որ ճանապարհերը չափազանց անձնատուր լինելով վերացականության, էլ միշոց չեն ունենում քրիստոնեական սերը վերակենդանացնելու, ուստի վանական և միարանական կյանքի հիմնադիրը դարձավ Պոնտոսին և Կապադովկիայում։ Որքան զորանում էր վանական-միարանական կյանքը, այնքան թուլանում էր ճանավորա-

կան միայնակեցականը, և վանքերը քրիստոնեական եկեղեցու կարևոր հաստատությունները հանդիսանալով տարածվեցին ամենուրեք, իսկ վանականությունը դառնում էր եկեղեցու հյութական և բարոյական զարգացման համար հոգևոր գինվորություն»²⁸։

Բարսեղ Կեսարացին այսպիսով հիմնադիրն է հանդիսանում նոր տիպի վանականության։ «Եր մորինած կանոններուն ազդեցույթունը գերիշտող նուակ հետագա ժամանակի կրոնական կենաց կազմության համար, այնպես որ Փոքր Ասիտ մեջ «վանական» կյանքը հաղթեց հնագույն «ճգնավորական» (միայնավորական) կենցաղին»²⁹։

Վանքերը այնուհետև դադարեցին ճգնարաններ լինելուց և հանդիսացան քրիստոնեական դաստիարակության և արվեստի օշակներ։

370-ական թվականներին մոլեգնում էր արիոսական մոլորությունը, հատկապես Փոքր Ասիայում։ Եկեղեցու ներքին խաղաղությունը դարձալ վրդովկել էր։ Վաղես կայսրը (364—378) քաջալերում էր արիոսականներին։

370-ին վախճանվում է Կապադովկիայի Եվստիփոս միտրոպոլիտը։ Այդ փառավորությունը պատմական Աթոռի վրա հրան հաջորդում էր արժանավորապես Բարսեղ Կեսարացին։ «Կատարյալ վանականը դարձավ միանգամից մի եռանդուն եկեղեցական», որովհետև նա «սկզբից ներ կազմակերպված և հատատուն բնավորության տեր էր և հրա համար պարզ էր յուր անձիքն ու շանելիքը»³⁰։

Կեսարացու միտրոպոլիտության տարիներին հրա հիմնատուն, շրջանայաց և հետևվողական պայքարի շնորհիվ հիմնովին շահսահպում է արիոսականությունը Կապադովկիայում։ Նրա մեծագույն մտահոգությունը եկեղեցու միության վերահաստատումն էր և ներքին խաղաղության ամրապնդում։ Նրա շանքերով Կապադովկիայի պատմական Աթոռը փառավորվում է եկեղեցավեր, հոգևոր, վանական, մշակութային, մարդասիրական հաստատությունների ցանցով և շքեղ ու մնայուն գործերով³¹։

Հայ եկեղեցին միշտ սերտ հարաբերու-

²⁸ Հուսիկ Եպս. (Տեր-Մովսիսյան), նոյնը, էջ 44։ Այս հաստատումները Հուսիկ եպիսկոպոս քաղել է իր աշխատության մեջ Ֆ. Ֆարրարի «Ս. Հարց վարքն ու գործերը» ոռուերև գրքից։

²⁹ Արշակ Ալպառաճյան, նոյնը, էջ 282։

³⁰ Երվանդ Վոր. Տեր-Միմասպան, նոյնը, էջ 270։

³¹ «Ելյա շարաթաթերթ, էջ 1104—1107։ Տես հան Quasten, նոյնը, էջ 205—206։

թան մեջ է եղել Կապարովիայի Աթոռի նետ, մանալանդ և Գրիգոր Լուսավորչի օրերից³²: Պատմական փաստ է, որ Կեսարիայում, Փոքր Հայքի այդ հշանավոր քաղաքում, ասրուն էր հոծ հայություն: Կեսարիան հայաքաղաք էր:

Կեսարիայի դպրոցներում գիտություն և ուսում էին ստանում համ բազում հայ ուսանողներ, որոնցից ումասր աշակերտներ են Ծովականի Բարսեղի հորը և իրեն՝ Կեսարացուն:

Մեծն Ներսեսի օրով Հայաստանում բացված մենաստաններն ու դպրոցները, հիգիենանոցներն ու անկելանոցները դեկավարվում էին համ մասամբ Բարսեղ Կեսարացու հաստատած կանոններով, «ճշտ այն թվականներուն երբ Բարսեղը նոյնը կկատարեր Կապարովիայի մեջ»³³:

Փականությունը «Ս. Բարսեղի վարուց և գործունեության վերաբարությունը պատկերացրել է հանձին նրա մեծ ժամանակակից Մեծն Ներսեսի»³⁴:

Հայ եկեղեցու և Կապարովիայի Աթոռների միջև էլ ավելի սերտ հարաբերություններ են եղել Բարսեղ Կեսարացու և Մեծն Ներսեսի օրոք:

Այս երկու պատմական Աթոռների եկեղեցական հարաբերությունների մեջ, սակայն, «անհնար է գործ մը կամ պարագա մը ցուցնել, որով Կեսարիո արքեպիսկոպոսներ Մեծ կամ բռն Հայաստանի վրա իրավասություն կամ հսկողություն կատարած ըլլան: Այստեղ ստացված ձեռնադրություններն ալ պատվադիր հապատակներ անտին չեն անցնիր և երբեք իրավասական հշանակություն չեն կրնար ունենալ»³⁵:

Բարսեղ Կեսարացին մահանում է հազիվ հիսուս տարին լրացած, 379 թվականի

հունվարի 1-ին, երեքշաբթի օրը³⁶, «վասնի էր ծերացեալ և ցաւագար՝ մարմնով»:

Կեսարացին, ինչպես նշվեց, իր ծնունդից սկսած եղել է վաստառող և բողակազմ. նետագայում «նա իրեն ճգնավորությամբ թուլացրել էր և հիվանդությունների տեր դարձել»³⁷:

«Հիւլանդությունը անքածան է ինձանձից, սկսած վաղ հասակից մինչև ծերություն», վկայում է իր մասին Կեսարացին: Այդ իսկ պատճառով «բազում էական գործեր կիսակատար են մնում»³⁸:

Բարսեղ Կեսարացու վաղածամ մահը մեծ կորուստ էր և՝ Կապարովիայի, և՝ ընդհանրական եկեղեցու համար: Նրա մահվան առթիվ Գրիգոր Նազիազանցին իր արտասանած «դամբանական»-ի մեջ վկայում է. «Ծաեր էր կորուստը. նրա համար ամբողջ քաղաքն էր անհանգատացած... Մտածում էին փրկել նրա հոգին. թվում էր, հնարավոր կիմենք բռնել և բռնությամբ պահել նրան ձեռքերով կամ աղոթքներով. (Վիշտը նրանց անմիտ էր դարձել) և բռնոր դեպքերում եթե միայն հնարավոր էր, պատրաստ էին անգամ իրենց կանքը տպան»³⁹:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ ոգեկոչում է հիշատակը և. Բարսեղ Կեսարացու: Առաջինը նրա մահվան օրը, հունվարի 1-ին, իսկ երկրորդը՝ հոկտեմբերին, եկեղեցու հշանավոր «երկուսան վարդապետների» տոնին⁴⁰:

Բարսեղ Կեսարացու հիշատակին նվիրված Մանկունք մասնավոր շարականը նրան ընությագրում է պասպես. «Լուսապայծան իմաստիք... լուսատորեաց զեկեղեցի աստուածային բանին... Սին հաւատոյ հաստատուեան... ըստ անմարմնոցն ի մարմնի քաղաքավարեալ առաքինութեամբ ի մասնկութենի»⁴¹:

(Ծարունակելի)

³² Արշակ Ալպոյանցան, նոյնը, էջ 271—289:

³³ Եղիշե արքեպիսկոպոս Թուրյան, Ազգային պատմություն, Երուսաղեմ, 1934, էջ 247: Տե՛ս նաև «Լոյս», նոյնը, «Ծագումն հայ վանականության», էջ 360, 468, 538:

³⁴ «Կնիք նաւատոյ», նոյնը, էջ XLV:

³⁵ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Ա. նատոր, Ա. մաս, Բեյրութ, 1959, էջ 227: Նաև Օրմանյան «Աթոռ Հայաստանիաց», 1972, Սայր Աթոռ, էջ 44—45:

³⁶ Վազգեն Հակոբյան, Պատմա-բանասիրական համայնք, 1977, № 1, էջ 252:

³⁷ Երվանդ Վրու. Տեր-Մինասյան, նոյնը, էջ 270:

³⁸ Կ. Մ. Մուրադյան, նոյնը, էջ 54:

³⁹ Նոյնը:

⁴⁰ Օրացոյց Մայր Աթոռի, 1977, էջ 14 և 132:

⁴¹ «Զայթիրաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 422: